

Գրքին հավելվածի ձևով կցված են քրդական ժողովրդական, բանահյուսության առանձին հատվածներ: Գրքում գետնգլած են քուրդ հին բուլեիկներ, անվանի գիտնականների, գրողների, ուսուցիչների, բժիշկների և կուլտուրաստների առաջավորների լուսանկարները:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ «ՈՒՂԵՑՈՒՅՏԸ»

Միասնական ուղղագրության և կետադրության, ինչպես նաև ուղղախոսության պարտադիր կանոնների ուղեցույցը յուրաքանչյուր դրական լեզվի համար անհրաժեշտ պահանջ է: Պրոֆ. Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի հեղինակությամբ վերջերս լույս տեսած «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույցը»¹ այդ պահանջը բավարարելու առաջին հաջողված փորձն է:

«Ուղեցույց»-ի հեղինակները բացատրել և օրինակներով հիմնավորել են քերականական, ուղղագրական և կետադրական կանոնների կոնկրետ դրսևորումները, ճշտել ուղղագրական և կետադրական մի շարք նորմաներ, հեշտացրել ուղղախոսության յուրացումը:

«Ուղեցույց»-ը հեշտացնում է հայոց լեզվի ուսուցիչների, դրական և հրատարակչական աշխատողների գործը, նստատեղում է գործնական քերականության, ուղղագրության, կետադրության և ուղղախոսության հարցերի մշակմանը:

Ուղղագրական և կետադրական փոփոխություններն զգալի չափով կախված են բառապաշարի հարստացումից և քերականական կառուցվածքի զարգացումից: Հետևելով լեզվի կառուցվածքի զարգացմանն ու կատարելագործմանը, ուղղագրությունը ևս կատարելագործվում է, ճշգրտում արդեն հնացած կանոնները, հարստանում նորերով: Ընկալան է, որ ուղղագրության և կետադրության զարգացումը որոշ չափով ետ է մնում լեզվի զարգացումից: Հայոց լեզվի ուղղագրության նորմավորման համար մեծ նշանակություն է ունեցել անվանի հայագետ Մ. Արեղյանի կողմից 1922 թ. մշակված ռեֆորմը: Ուղղագրական այս ռեֆորմը իր էությամբ առաջադիմական խոշոր քայլ էր ավանդական ուղղագրության անմիօրինակությունների վերացման համար: Միասնական ուղղագրության գործում կարևոր դեր է կատարել նաև Տերմինաբանական կոմիտեն իր մի շարք որոշումներով: Այս բոլորն, անշուշտ, կարգավորել և կայունացրել են հայոց լեզվի ուղղագրության և կետադրության նորմաները:

Գրախոսվող աշխատության մեջ ավելի ամբողջական և բազմակողմանիորեն են լուսարանված հայոց լեզվի ոչ միայն ուղղագրական և կետադրական նորմաները, այլև քերականության, ուղղախոսության և ոճական այնպիսի հարցեր, որոնք սերտորեն առնչվում են ուղղագրության և կետադրության հետ:

Աշխատության առաջին գլխում հեղինակներն, ըստ ամենայնի, որոշակի օրինաչափություններին մեջ են դրել ձայնավոր և բաղաձայն հնչյունների, երկձայնավորների և երկհնչյունների ուղղագրությունը, պարզություն և կարգավորում են մտքով օտար բաների տառադարձման մեջ, որով և հեշտացրել են այդպիսի բաների ուղղագրության յուրացումը: Օտար բաների տառադարձման համար հեղինակներն աչքի առաջ են ունեցել ոչ միայն հայոց լեզվի հնչյունական հնարավորությունները, այլև ավանդաբար ընդունված և արմատացած բաների տառադարձությունը:

Երկրորդ գլխում մանրամասնորեն պարզաբանված են հայոց լեզվի հնչյունափոխությանը վերաբերող ուղղագրական բոլոր հարցերը: Կիրառելով ժամանակակից լեզվաբանության դիտական տվյալները շեշտի և շեշտի նետ կապված հնչյունափոխության վերաբերյալ, հեղինակները մեծ ֆանասիությամբ խմբավորել և համակարգել են հայերենի հնչյունները, բացահայտել նրանց օրինաչափությունները, կանոններ մշակել հնչյունափոխության բոլոր դեպքերի համար և տվել ընդարձակ հավելվածներ: Այդ հավելվածները, ինքնուրունբայան, մեծ կարևորություն են ներկայացնում, որովհետև նույնիսկ հնչյունափոխվող, նույնիսկ չհնչյունափոխվող բաները անխտիր հնչյունափոխվում են

¹ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության ուղղագրության և կետադրության ուղեցույց, Հայպետհրատ, 1957, 403 էջ:

խոնարհման, ածանցման և կամ բառաբարդման մասանակ: Ընդունելով հնչյունափոխությունների ժառանգորդական կարեւոր նշանակությունը, որը հիմնականում տարածվում է բառային հիմնական ֆոնդի հին շերտի վրա, հեղինակները հաշվի են առել նաև աշխարհաբար զրական հայերենում բառերի հնչյունափոխությունը հետզհետե խուսափելու միտումը: Դրանով է բացատրվում հնում հնչյունափոխվող մի շարք բառերի հնչյունափոխությունը միտումը արդի հայերենում, ինչպես՝ վաթիշ, վաթիսի, վաթիսի: Սակայն, արդի զրական հայերենում բառերի հնչյունափոխությունը միտումը և ավանդական կանոններից շեղվելը «Ուղեցույց» հեղինակներին ամենին էլ հիմար չեն տվել անտեսելու ավանդական հնչյունափոխության օրենքները: Էնդհակառակը, բերված են բոլոր այն միավանկ բառերը, որոնք հնչյունափոխվում են, տրված են նրանց եզակի սեռական, հոգնակի ռեզգական ձևերը, նրանց ածանցավոր և բարդված ձևերին վերաբերող օրենքներ: Այսպիսով, յուրաքանչյուր խոսքի մասի ուղղագրությունը ուսումնասիրված է բառի բաղաձևությունը մեջ: Եթե, ասենք, տվյալ խոսքի մասն ածանցվում է, ապա այբուբենական կարգով բերվում են բոլոր ածանցները, կոնկրետ օրենքներով վրա ցուցադրվում բառի ուղղագրությունը ածանցավոր և բարդ ձևերում:

Հեղինակները հատուկ ուշադրություն են դարձրել հայոց լեզվի հոգնակի թվի կազմությանը և կանոններ նշել հոգնակի թվի կազմության բոլոր դեպքերի համար (էջ 145—148), որոշակի կանոններ են մշակված նաև նախածանցներով կազմված միավանկ բառերի հոգնակի թվի կազմության համար, որը մինչև հիմա, հատկապես զարգացած պրակտիկայում, անտեսված է եղել, տրված են հոգնակի թվով գոյականների գործածությունը զեպքերը թվականների հետ և պարզաբանված նրանց ռեզգական պաշտոնը (էջ 152—157): «Ուղեցույց»-ում չեն մոռացված նաև ռեզգական բնույթ կրող այնպիսի հարցեր, որոնք կապված են ուղղագրության և կետագրության կոնկրետ կիրառության հետ: Դրանցից, օրինակ, կարելի է նշել վերացական նշանակություն ունեցող գոյականների գործածությունը հոգնակի թվով (էջ 151), անհոգնական գոյականների հոգնակի թվով գործածությունը (էջ 152—156), համառոտ անդամների կետագրությունը և այլն:

Աշխատությունը թեև չունի ուղղախոսական առանձին բաժին, բայց հեղինակների ուշադրությունը չի վրիպել նաև այդ հարցը: Տրված են բոլոր բաղաձայն հնչյունների գրությունը և արտասանության տարբերությունները, հայտնաբերված և որոշ կանոնների տակ են դրված նախածանցով կազմված կամ բարդության վերջին բաղաձայն կազմող այն բառերի ճիշտ արտասանությունը, որոնք սկսվում են ու-ով և ե-ով, ինչպես, օրինակ, գրվում են՝ անօրակ, ամենափոքրիմ, մեներգ, արևմտաեվրոպական: Բառի ուղղագրության և ուղղախոսության հարցերը պարզաբանելիս՝ հեղինակները հաշվի են առել մեր լեզվի ռեալ բարենչյունությունը նորմաները (էջ 181): Ուղեցույցում հայոց լեզվի զարգացման առաջընթացը, հեղինակները պարզություն են մտցրել նաև հոլովման և խոնարհման զուգահեռ ձևերի մեջ, ըստ որում մի դեպքում կտրականապես մերժում են հնացած խոնարհման և հոլովման ձևերը, մյուս դեպքում՝ նախապատվությունը մեկին տալով՝ չեն հանձնարարում մյուս ձևը:

«Ուղեցույց»-ի ընդարձակ բաժիններից մեկն էլ կետագրության բաժինն է, որտեղ ավելի ամրագրված են հայոց լեզվի կետագրական նշանների գործածությունը զրեթե բոլոր դեպքերի կոնկրետ դրսևորումները, բան մինչև այժմ եղած ձևերի կետում: Համոզիչ օրինակներով հիմնավորված են տրոհության նշանների իմաստաբանական տարբեր կիրառությունները, դասակարգված են միջանկյալ բառերի ու բառակապակցությունների խմբերը և նշված նրանց վերաբերող տրոհության նշանները:

Գրախոսող աշխատությունն ունի նաև որոշ թերություններ, որոնց վրա արժե կանգ առնել: Հեղինակների կողմից երբեմն խախտվում է որոշ բառերի ուղղագրության միօրինակությունը: Օրինակ, երբ խոսվում է բառի քերականական հատկանիշների մասին, տվյալ բառի ուղղագրությունը մի ձևով է տրվում, մինչդեռ բառարանում՝ մի այլ ձևով (տե՛ս ուշիուշով էջ 209, և ուշի-ուշով էջ 386, քելուզ և էջ 219, և քելուզ էջ 338, փոխվուխ էջ 209, և փոխվուխ էջ 386): Հիմնավորված չէ րմվլիկ (փոխ. թմբլիկ), խառնիմաղաճ (փոխ. խառնիճաղաճ), հոլկուլ-հոլկուլ (փոխ. հոլկուլ-հոլկուլ) բառերի ուղղագրությունը: Այս բառերից թեկուղ վերցնենք թմբլիկ բառը, որը թուրք (բուրք) բառի կլոր իմաստի հետ է կապվում: Հեղինակները եւ հոգնակի վերջավորությունը ստացող բառերի համար բնորոշում են այն կանոնը, ըստ որի, երբ բառի երկու վանկից երկ-

բորզը զազանավանկ է, ապա բառը հոգնակի թվում ստանում է եր: Այդ կանոնն ընդհանրապես ճիշտ է, բայց այդ կանոնից բացառություն պետք է համարել անգղեր. զամփրոներ, արկղներ բառերը: Այս բառերի հոգնակին ինչպես ղեղարվեստական գրականության մեջ, նույնպես և գոյություն ունեցող բառարաններում կադմվում է ոչ թե եր, այլ ներ հոգնակի վերջավորությունը: Իժվար է համոզվել այն բանում, որ վերջալույս և արշալույս բառերի հոգնակին միայն ներ վերջավորությամբ է կադմվում, որովհետև այս երկբորզ ղաղարկները (երկու ղեպում էլ լույս) իրենց հիմնական իմաստը չեն փոխում: Միայն անձնական հոգնակի թվով կարելի է ասել արշալույսներ:

Թեև հեղինակները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել միութայն գծիկով գրվող բառերի վրա և քերականական որոշ հատկանիշներով դասակարգել են միութայն գծիկով գրվող բառերը, բայց և այնպես լիովին չի պարզաբանված այն հարցը, թե որ ղեպում ղենել միութայն գծիկը և որ ղեպում չղենել. ինչու, օրինակ, ռազմա-քաղաքական, ռազմա-ծովային բառերը միութայն գծիկով են գրվում, մինչդեռ ռազմա-վառար, ռազմա-նավորություն ռազմա-նավորական բառերն առանց միութայն գծիկի: 25- որ այդ բառերը ուսուցանում միշտ գրվում են միութայն գծիկով:

Կետագրությունը վերաբերող բաժնում երբեմն էլ կետագրությունը հիմնավորելու համար բերված օրինակները տիպական չեն հայերենին: Հատկապես շատ ձգձգված են համասեռ անդամներին և տրոհվող լրացումներին վերաբերող կետագրության բաժինները: Մեր ասածները հիմնավորում համար բերված հետևյալ օրինակը. «325. Ստորակետ գրվում է կրկնվող բառերի մեջ, որոնք գործածվում են ոչ թե որպես նախադասության համասեռ անդամներ, այլ՝ խոսքին մեծ արտահայտչություն և ուժեղություն տալու միջոցներ (մակրայների մեջ այդ ղեպում գրվում է միութայն գծիկ, էջ 282): Այս բնորոշումից դուրս է դալիս, որ կրկնվող բառը միաժամանակ կարող է և՛ մեծ արտահայտչություն, և՛ «ուժեղություն» ցույց տալ, բայց հայտնի է, որ արտահայտչությունը և ուժեղությունը (ուժեղությունը) միևնույն հասկացությունը չեն: Տրոհված կրկնվող բառերը կամ մեկ, կամ մյուս հատկանիշը կարող են ցույց տալ, դրա համար էլ սահմանման մեջ և շաղկապի փոխարեն նաև շաղկապը պետք է գրվեր: Սահմանումից հետո անմիջապես փակագծերում գրված նախադասության միտքը նույնպես ճիշտ չէ, որովհետև կրկնվող բառերը, որոնք ստորակետով տրոհվում են, ինքնուրույն միավորներ են, բարդություն չեն կազմում, մինչդեռ կրկնվող ժակրայները միշտ բարդություն են կազմում և այն դերն ու նշանակությունը չունեն, ինչպիսի դեր ու նշանակություն ունեն տրոհվող կրկնվող բառերը: Այդ պարզ երևում է հեղինակների բերած օրինակից, ինչպես՝ «ես նրան վաղուց, վաղուց դիտեմ» և «ես նրան վաղուց-վաղուց դիտեմ»: Ինչպես երևում է, վերջին օրինակը հայոց լեզվին տիպական չէ: Եթե այդ օրինակի փոխարեն ասվի՝ «ես նրան շուտ-շուտ եմ տեսնում», այստեղ իհարկև, շուտ-շուտ (հաճախակի) կրկնվող մակրայը ոչ մեծ արտահայտչություն է ցույց տալիս, ոչ էլ ուժեղություն, այլ միայն գործողության նպատակային դեր է կատարում: Այդ պատճառով էլ հեղինակների բերած սահմանումից հետո փակագծված նախադասության միտքը նույնպես ճիշտ չէ, որովհետև «այդ ղեպում» կապակցությունն ակնարկում է «արտահայտչություն» և «ուժեղություն» իմաստը: Ընդհանուր չէ նաև հետևյալ ձևակերպումը. «Այնպես, ինչպես շաղկապը երկու մասի բաժանվելիս՝ ստանում է ձևի պարագայի նշանակություն» (էջ 303, ծան. 1): Ես նախ՝ այնպես, ինչպես. ոչ թե մեկ շաղկապ է, այլ երկու, երկրորդ՝ նրանք մի՞թե առանց բաժանվելու գործածական են:

«Ուղեցույց»-ի հեղինակները մի կողմից դանում են, որ մի թվականը «մոտենում է որոշող հոգին, բայց ամբողջությամբ չի փոխարինում նրան» (էջ 138), մյուս կողմից «մոտավորապես փոխարինում է անորոշ հոգին» (էջ 139): Առաջին միտքը հիմնավորելու համար բերվում է «նա մի քար տաշեց» նախադասությունը, «որտեղ թվականով որոշված է առարկայի թիվը՝ միակությունը», այդ պատճառով էլ՝ «մի-ն չի գրվում հոգնակի գոյականի վրա, որովհետև նրա պաշտոնն է ցույց տալ մեկ և ոչ թե մեկից ավելի առարկաներ» (էջ 139): Միայն չի կարելի անտեսել լեզվական ունի վատերը, որովհետև մի բառը գրվելով քանի, խուսի, շարք բառերի հետ կարող է գործածվել հոգնակի գոյականների հետ, օրինակ՝ նա յուժեղ մի շարք խնդիրներ, նա տեսավ մի քանի լազարներ, նա տեսավ մի խումբ ուսանողներին: Դժվար չէ նկատել, որ այս նախադասություններին մեջ մի բառը ոչ թե սեն թվականի իմաստ է արտահայտում, այլ հոգնակի թվի անորոշ հոգի իմաստը: Զի կարելի համաձայնել հեղինակների այն մտքի հետ, թե՛ նա «մի քար

տաշեց» և «նա բար տաշեց» նախադասությունից առաջինի մեջ քալու բառն ավելի որոշ-
յալ է, քան նույն բառը երկրորդի մեջ՝ Երկու. նախադասությունների մեջ էլ քալու բառն
անորոշ է, միայն այն տարբերությամբ, որ առաջինում սր անորոշ հոգը կա, մինչդեռ
երկրորդում բացակայում է: Հարցն ավելի պարզ է դառնում, երբ սու թվականը դիտում
ենք պատմականորեն: Հայտնի է, որ մեկ թվականի փոխարեն դրաբարում եղել է մի
թվականը: Հայտնի է նաև այն, որ մեկ թվականը լեզվի դարդացման հետագա շրջանում է
ստեղծվել, որն աստիճանաբար դուրս է մղել մի բառի թվական լինելու իմաստը: Մի-ն
արդի հայերենում չի հոլովվում. մեկ-ը հոլովվում է: Այսպիսով, եթե մի բառն իր հետ
բերել է մեղմական և արգելական հրամայականի բառ-մասնիկի նշանակությունը, ապա
կորցրել է թվական լինելու իմաստը և փոխարինում է անորոշ հոգին, ճիշտ այնպես
ինչպես երևի և ներ հոգնակի մասնիկները ժամանակի բնթացքում դուրս են մղել դրաբա-
րում ք վերջավորության հոգնակի լինելու իմաստը, որն այժմ միայն ածանցի գեր է
կատարում:

Այս և նման կարգի թերությունները հեշտությամբ կարելի է վերանայել զբոսի
հաջորդ հրատարակության ժամանակ: Հայոց լեզվի «Ուղեցույց»-ը զգալի ներդրում է
միասնական ուղղագրության, կետագրության, ինչպես նաև ուղղախոսության վաղուց
զգացվող պահանջը բավարարելու գործում:

Ն. ՄԵՍՐԻՊՅԱՆ